

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության՝

**«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարման
վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին**

Ուսումնասիրության իիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան ծրագիրը, «Վերահսկիչ պալատի մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները:

Ուսումնասիրության նպատակը՝ «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուսումնասիրության օրենկանեքը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, գանձապետական համակարգ:

Ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 02.05.2011թ.-ից մինչև 20.05.2011թ.-ը:

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝ «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության հաշվետվություն, «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» (այսուհետ՝ Օրենք), «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներ, 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1748-Ն որոշում, ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշում, բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

2011 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել է 852,440,300.6 հազ. դրամ: 2011 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 30,711,125.4 հազ. դրամով, և արդյունքում՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 883,151,426.0 հազ. դրամ:

Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 11 կետի, արտաբյուջետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվել են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվել են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: Հաշվետվությունում ՀՀ 2011 թվականի պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներում մուտքերը ճշտված ծրագրով կազմել է 25,752,384.6 հազ. դրամ, որից՝ 20,832,268.4 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացվող եկամուտներն են, 4,914,097.6 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշվի ելքերի ֆինանսավորման ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, 6,018.6 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: Արտաբյուջետային միջոցների հաշիվներում փաստացի մուտքը կազմել է 22,398,119.9 հազ. դրամի գումար, որից՝ 19,742,986.38 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 2,635,198.7 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշվի ելքերի ֆինանսավորման ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ 19,934.8 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտներն, առանց արտաբյուջետային միջոցների, փաստացի կազմել է 861,108,004.9 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային միջոցների) նկատմամբ՝ 99.9%, իսկ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտները, ներառյալ՝ արտաբյուջետային միջոցները, փաստացի կազմել է 880,850,991.3 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 103.3%-ը, ճշտված ծրագրի՝ 99.7%-ը: 2011 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի (3,817,310,400.0 հազ. դրամ) նկատմամբ կազմել են 23.1% (2010թ.՝ 22.3%):

Օրենքով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 1,001,054,275.8 հազ. դրամ, 2011 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել է 40,933,784.7 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 25,693,220.4 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսը) կազմել է 1,041,988,060.5 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված ծրագիրը (առանց արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսի) կազմել է 1,016,294,840.1 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 21,902,091.1 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 986,509,208.8 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 98.5%-ը, ճշտված ծրագրի՝ 94.7%-ը: 2011 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 25.8% (2010թ.՝ 27.3%):

Օրենքով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի պակասուրդը հաստատվել է 148,613,975.2 հազ. դրամ: ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախատեսված պակասուրդը

տարվա ընթացքում ավելացել է 10,222,659.3 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 158,836,634.5 հազ. դրամ: ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 105,658,217.5 հազ. դրամի պակասուրդ, որը Օրենքով նախատեսվածի 71.1%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ նախատեսվածի 66.5%-ը: ՀՆԱ-ի նկատմամբ 2011 թվականի պակասուրդը կազմում է 2.8% (2010թ.՝ 5%):

2002-2011 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ օրենքներում կատարված վերլուծությամբ առկա է ՀՀ կառավարությանը փոխանցված լիազորությունների ընդլայնում, որով 2011 թվականին ՀՀ կառավարությունը լիազորվել է լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

2011 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ

2011 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 880,850,991.3 հազ. դրամ (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները), 2011 թվականին բյուջեի փաստացի եկամուտները 2010 թվականի համեմատ աճել են 100,411,564.2 հազ. դրամով կամ 12.9%-ով, իսկ առանց արտաբյուջետային եկամուտների, աճը կկազմի 99,957,432.9 հազ. դրամ կամ 13.1 %: 2011 թվականի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները, կազմել է 23.1%, 2010 թվականի 22.3%-ի փոխարեն, այսինքն՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 0.8% տոկոսային կետով:

Ըստ Հաշվետվության, 2011 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում, հարկային եկամուտները և պետական տուրքը կազմել են 74.2%, առանց արտաբյուջետային հաշիվների եկամուտների՝ 75.8%, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ համապատասխանաբար՝ 14.0% և 14.3%, պաշտոնական տրանսֆերտները՝ համապատասխանաբար՝ 6.7% և 6.8% և այլ եկամուտները՝ համապատասխանաբար՝ 5.0% և 3.1%:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) Օրենքով նախատեսված 629,254,248.0 հազ. դրամից ավելի է մուտքագրվել 2,338,853.9 հազ. դրամով, կամ 0.4%-ով, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 631,593,101.9 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված տարեկան ծրագրի 100% կատարում: 2011 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 16.55%, նախորդ տարվա 16.39%-ի համեմատ:

2011 թվականին պետական բյուջեն է մուտքագրվել 22,366,986.2 հազ. դրամի պետական տուրք, որը ճշտված ծրագրի և Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 102.2% և 107.8%: 2011 թվականին պետական տուրքը կազմել է փաստացի եկամուտների 2.5%-ը:

2011 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները Օրենքով նախատեսվել են 123,440,696.5 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 8,853.97 հազ. դրամով ավելի և կազմել է 123,449,550.5 հազ. դրամ, կամ կատարվել է 100.0%-ով: 2011 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են փաստացի եկամուտների 14.0%-ը:

2011 թվականին պետական բյուջեի պաշտոնական տրանսֆերտները Օրենքով նախատեսվել են 56,003,323.1 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 64,649,557.2 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 59,416,039.7 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի և ճշտված ծրագրի համապատասխանաբար՝ 106.1%-ը և 91.9%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական տրանսֆերտները կազմել են 58,134,289.3 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 103.8%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 91.9%: 2011 թվականին պաշտոնական տրանսֆերտները կազմել են փաստացի եկամուտների 6.7%-ը:

2011 թվականին պետական բյուջեի «այլ եկամուտները» Օրենքով նախատեսվել են 22,996,281.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 41,532,499.8 հազ. դրամ, փաստացի ցուցանիշը կատարվել է 44,025,313.1 հազ. դրամով, կամ Օրենքով նախատեսվածի՝ 191.4%-ը, ճշտված ծրագրի՝ 106.0%-ը: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 27,052,471.3 հազ. դրամ, որի կատարողականը Օրենքով հաստատվածի նկատմամբ կազմել է 117.6%, իսկ ճշտված ծրագրի (առանց արտաբյուջետային եկամուտների) նկատմամբ՝ 114.7%: 2011 թվականին «այլ եկամուտները» կազմել է փաստացի եկամուտների 5.0%-ը:

Հաշվետվությունում բացակայում է ըստ եկամտատեսակների ճշտված պլանին և կատարողականին վերաբերող տվյալները, որը հնարավորություն չի ընձեռնում հիմնավոր վերլուծություն իրականացնել: Վերահսկիչ պալատի կարծիքով, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախատեսել եկամուտները՝ ըստ եկամտատեսակների, մասնավորապես՝ հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների:

2011 թվականի ընթացքում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունները ֆինանսական գործունեության արդյունքում ստացած գուտ շահույթից շահարաժին են վճարել 983,382.6 հազ. դրամի, նախատեսված 651,137.4 հազ.

դրամի փոխարեն կամ կատարվել է 151%-ով: Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության վերահսկողության դաշտում է գտնվում պետության սեփականություն հանդիսացող 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող 397 ընկերություն:

2011 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 21,902,091.1 հազ. դրամ փաստացի արտաքյուջետային ծախսերը) կազմել են 986,509,208.78 հազ. դրամ, որը կազմում է ճշտված ծրագրի՝ 94.7%-ը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի ծրագրերի (*գործառնական դասակարգմանը*) կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով ութ ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրերով նախատեսվել է 2,149,226.1 հազ. դրամ, չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել,
2. թվով տասնինը ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը կազմել են 19,805,649.3 հազ. դրամ, ճշտված ծրագրից ավելի ծախս է կատարվել՝ 4,694,348.8 հազ. դրամի չափով,
3. թվով երեսունյոթը ծախսային ծրագրերով (այդ թվում՝ տասնութը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը): Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 40,675,320.8 հազ. դրամ, մինչդեռ փաստացի կատարողականը կազմել է 11,405,783.9 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 28.0%-ը: Պետք է նշել, որ այդ ծրագրերում փաստացի ցուցանիշի ամենամեծ բացասական շեղումը ճշտված ծրագրի նկատմամբ գումարային արտահայտությամբ արձանագրվել է «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր» ծրագրում՝ -(8,291,832.5 հազ. դրամ),
4. 2011 թվականի ընթացքում նախատեսված 1,244,850.5 հազ. դրամ գումարի չափով վեցը ծախսային ծրագրեր տարեկան ծրագրի ճշտման արդյունքում գրոյացվել են,
5. թվով հիսուն ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն ճշտված ծրագրով նախատեսվել են 33,582,204.1 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել են 28,511,938.8 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 84.9%-ով: Այդ հիսունից ինը դրամաշնորհային (ներառյալ արտաքյուջետային դրամաշնորհային ծրագրերը)

ծրագրեր են, որոնց փաստացի ծախսը կազմել է 644,114.4 հազ. դրամ և տասնմեկ վարկային ծրագրեր են՝ 5,177,907.4 հազ. դրամ փաստացի ծախսով,

6. 2011 թվականի ընթացքում կատարված ծախսերի կառուցվածքը հետևյալն է՝ սոցիալական պաշտպանություն՝ 26.0%, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 15.6%, պաշտպանություն՝ 14.7%, կրթություն՝ 10.8%, տնտեսական հարաբերություններ՝ 8.5%, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 7.4%, առողջապահություն՝ 6.4%, քնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 4.4%, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 3.7%, հանգիստ, մշակույթ և կրոն՝ 1.8%, շրջակա միջավայրի պահպանություն՝ 0.7%:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասնմեկ բաժիններում նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Շրջակա միջավայրի պաշտպանություն» բաժնում՝ 74.6%:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (ներառյալ՝ արտարյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը (*տնտեսագիտական դասակարգմամբ*) հետևյալն է. 82.3%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, 17.7%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն են:

2010 թվականի համեմատ, 2011 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 3.4%-ով: 2011 թվականին ծախսերը Օրենքով նախատեսվել է 1,001,054,275.8 հազ. դրամ: 2011 թվականին փաստացի ծախսերը կազմել է 986,509,208.8 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 98.5%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 94.7%-ով:

2011 թվականին պետական բյուջեից 19,751,151.48 հազ. դրամը տրամադրվել է սուբսիդիաներին, որից՝ 17,878,935.93 հազ. դրամը, կամ 90.5%-ը պետական կազմակերպություններին տրամադրված սուբսիդիաներն են, իսկ 1,872,215.6 հազ. դրամը կամ 9.5%-ը՝ ոչ պետական կազմակերպություններին տրամադրված սուբսիդիաները:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 99,362,435.1 հազ. դրամի դրամաշնորհներ (ընդամենը ծախսերի 10.1%-ը), որից՝ 94,913,809.4 հազ. դրամը պետական հատվածի այլ մակարդակներին հատկացված դրամաշնորհներն են (ընդամենը դրամաշնորհների 95.5%-ը), 2,794,324.1 հազ. դրամը (ընդամենը դրամաշնորհների 2.8%-ը) կապիտալ դրամաշնորհներն են, հատկացված պետական հատվածի այլ մակարդակներին,

1,475,311.6 հազ. դրամը (ընդամենը՝ դրամաշնորհների 1.5%-ը) հատկացվել են միջազգային կազմակերպություններին, իսկ 178,990.0 հազ. դրամը (ընդամենը՝ դրամաշնորհների 0.2%-ը) հատկացվել են օտարերկրյա կառավարություններին:

Ընթացիկ դրամաշնորհներից 32,416,802.6 հազ. դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դրամացիաներին, 19,588,572.2 հազ. դրամը՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, իսկ այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել է 27,776,968.4 հազ. դրամ:

2011 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերի 26.0%-ը կամ 256,413,748.0 հազ. դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որից 72.8%-ը միայն կենսաթոշակներն են:

«Այլ ծախսեր» հողվածով հատկացվել է 145,108,268.0 հազ. դրամ, որից 141,176,427.8 հազ. դրամը, կամ՝ 97.3%-ը այլ ծախսերի «այլ ծախսերն» են:

2011 թվականին «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հողվածով ծախսերը Օրենքով նախատեսվել է 162,253,403.9 հազ. դրամ, որը բյուջետային տարվա ընթացքում ավելացվել է 41,819,923.4 հազ. դրամով, կամ 25.8%-ով, ճշտված ծրագրով կազմել է 204,073,327.3 հազ. դրամ և փաստը կազմել է 174,193,972.5 հազ. դրամ: Բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և դրանց օտարումից մուտքերը ավելացվել են համապատասխանաբար՝ 45,009,436.2 հազ. դրամով և 3,189,512.8 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը համապատասխանաբար կազմել է 207,325,598.4 հազ. դրամ և 3,252,271.1 հազ. դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի ծախսերը և դրանց օտարումից մուտքերը համապատասխանաբար կազմել են 177,714,153.7 հազ. դրամ և 3,520,181.2 հազ. դրամ:

ՀՀ 2011 թվականին պետական բյուջեի ծախսերի (*գերատեսչական դասակարգմանը*) վերլուծությունից պարզվել է, որ ընդամենը փաստացի ծախսերից 56.6%-ը բաժին է ընկնում հինգ գերատեսչություններին: Օրինակ՝

1. ՀՀ 2011 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 20.7%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 209,709,904.4 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 209,521,508.9 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 204,193,830.5 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 97.5%-ը: 2011 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2010 թվականի համեմատ աճել է 7.22%-ով:

2. 2011 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 9.8%-ն է, որը Օրենքով նախատեսվել է 104,079,289.3 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 102,274,526.5 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության փաստացի ծախսերը կազմում են 96,590,846.5 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի՝ 92.8%-ը, ճշտված ծրագրի՝ 94.4%-ը:

3. 2011 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 6.5%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը: Այդ գերատեսչությանը հատկացված միջոցների օգտագործման համար Օրենքով նախատեսվել է հատկացնել 62,588,320.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 66,639,566.6 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կատարվել է 63,736,067.5 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 95.6%-ը: 2011 թվականին ՀՀ առողջապահության նախարարության փաստացի ծախսերը 2010 թվականի համեմատ աճել է 12.4%-ով:

4. 2011 թվականին գերատեսչություններից փաստացի ընդամենը ծախսերի 5.2%-ը բաժին է ընկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների օգտագործմանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 59,581,015.6 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 59,031,403.1 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 51,233,095.0 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 86.8%-ը: 2011 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2010 թվականի համեմատ նվազել է 5.5%-ով:

2011 թվականին գերատեսչություններից ճշտված ծրագրի նկատմամբ ամենացածր կատարողական է արձանագրվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն գերատեսչությունում, այսպես՝ Օրենքով նախատեսվել է հատկացնել 36,617,646.4 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 36,712,181.4 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 22,820,560.9 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 62.2%-ը: Նման ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիսահարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրով, որի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 6.8%:

Ըստ Հաշվետվության, 2011 թվականին ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաքուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 21,902,091.1 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 85.2%:

2011 թվականին արտաքուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ամենամեծ ծախս կատարել են երեք գերատեսչություններ՝

- ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն՝ ամբողջ արտաքյուղետային միջոցների 53.4%-ը,
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ ամբողջ արտաքյուղետային միջոցների 33.2%-ը,
- ՀՀ առողջապահության նախարարություն՝ ամբողջ արտաքյուղետային միջոցների 5.4%-ը:

2011 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Օրենքով նախատեսվել է հատկացնել 25,801,967.9 հազ. դրամ: Տարվա ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է 11,891,682.6 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 37,693,650.5 հազ. դրամ: 2011 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 36,803,538.8 հազ. դրամ: 2011 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից 65.6%-ը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը կազմել են «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով կատարված ծախսերը:

2011 թվականի բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 381,343,219.4 հազ. դրամի գնումներ (առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի գնումների), սակայն փաստացի վճարվել է 371,115,895.7 հազ. դրամ:

Վերահսկիչ պալատի կարծիքով, Հաշվետվությունը պետք է ներառի գնումների գործընթացի վերաբերյալ համապատասխան տվյալներ՝ ըստ գերատեսչությունների գործարքների (ընտրանքային), որը տեսանելի կդարձնի Հայաստանի Հանրապետությունում պետական կարիքների համար իրականացվող գնումների արդյունավետությունը:

2011 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ

2011 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 105,658,217.5 հազ. դրամ: 2010 թվականի համեմատ, 2011 թվականին պակասուրդի մեծությունը նվազել է 39.2 տոկոսային կետով, որը պակասուրդի ֆինանսավորման և արտաքին, և ներքին աղբյուրների նվազման արդյունք է:

2011 թվականին պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 148,613,975.2 հազ. դրամով: Տարվա ընթացքում ՀՀ կառավարությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պակասուրդի ֆինանսավորման մեծությունը ավելացրել է 10,222,659.3 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է

158,836,634.5 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 71.1%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 66.5%:

2011 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 82,193,930.0 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել են փոփոխություններ, և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը ավելացվել է 3,104,571.5 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 85,298,501.5 հազ. դրամ: Փաստացի այդ ցուցանիշը կազմել է 65,909,594.3 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ 80.2%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 77.3%:

Ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի «ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վճառը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում հաշվեկշռի հրապարակման պահից երեսուն օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, Օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին է տրամադրում անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ»:

2011 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1181-Ա որոշմամբ 2010 թվականի ֆինանսական գործունեության արդյունքում ՀՀ կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկին տրամադրել է 77,512,700.355 դրամի անվանական արժեքով անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակ, այսինքն՝ ձևավորվել է պարտավորություն (երաշխիք) ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ:

Հարկ ենք համարում նշել, որ պետական ընդհանուր ռեսուրսները 2011 թվականին նվազել են 2010 թվականի նկատմամբ 7,321.9 մլն դրամով, այսինքն՝ առկա է պետական ընդհանուր ռեսուրսների նվազման միտու:

Համաձայն Հաշվետվության, 2011 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է 8,951.5 մլն դրամ, այդ թվում՝ 1,517.5 մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն, *որից*՝

(27,220.4) մլն դրամ՝ ԿԳ-ում դեպոզիտի փոփոխություն,

(1,808.8) մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

(4,634.7) մլն դրամ՝ արտաքյուջեի փոփոխություն,

(4.4) մլն դրամ՝ մոնետիզացման հաշիվների փոփոխություն,

3,507.7 մլն դրամ՝ ԾԻԳ-ի միջոցների փոփոխություն,

31,678.1 մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

(39,000.0) մլն դրամ՝ Ժամկետային ավանդներ ԿԲ-ում,

(7,321.9) մլն դրամ՝ պետական ընդհանուր ռեսուրսների (ներառյալ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում) փոփոխություն, այդ թվում՝ 732.3 մլն դրամ՝ միջանկյալ հաշվի փոփոխություն,

(74.2) մլն դրամ՝ հաշվետու ժամանակաշրջանում տարեսկզբի ազատ մնացորդին մուտք,

(2,125.5) մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաքյուղետային հաշիվների տարեսկզբի մնացորդից օգտագործում,

596.5 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաքյուղետային հաշիվների միջոցների փոփոխություն,

նախատեսված 705.9 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկդային ծախսերի տարբերություն:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2012 թվականի տարեսկզբի պետական ընդհանուր ռեսուրսները կազմել են 25,173.6 մլն դրամ:

2011 թվականին Օրենքով նախատեսվել է Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ստանալ 112,670,689.3հազ. դրամ արտաքին վարկ, սակայն, տարվա ընթացքում այդ ցուցանիշը փոփոխվել է, և տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 118,670,680.6 հազ. դրամ: 2011 թվականին արտաքին վարկերի և փոխատվությունների ստացումը փաստացի կազմել է 88,201,056.4 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 74.3%-ը:

2011 թվականին Օրենքով նախատեսվել է մարել 10,238,944.0 հազ. դրամ և փաստացի մարվել է 10,058,907.6 հազ. դրամ: Կատարողականը ծրագրի և ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 98.2%:

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՌԴ-ի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին բյուջետային վարկերի տրամադրումը տնտեսավարող սուբյեկտներին կազմել է 115,089.2 մլն դրամ, որից՝ 11,654.9 մլն դրամը՝ 2011 թվականի ընթացքում իրականացված վարկավորումն է: 2009-2011 թվականների ընթացքում ՌԴ-ի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) պետական վարկի միջոցների հաշվին տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի վերադարձը կազմել է 26,368.3 մլն դրամ, որից՝ 5,314.3 մլն դրամը՝ 2011 թվականի ընթացքում:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հարյուր տաս վարկային ծրագրերից իննունութիւն սպասարկումը, որը կազմում է սպասարկման ընդհանուր գումարի 88.1%-ը, ամբողջությամբ իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև կնքված 05.01.2007թ. «Հաշվի սպասարկման մասին» թիվ 11/301261

պայմանագրին, և որպես այդ պայմանագրի լրացում 01.09.2009թ. թիվ 6 համաձայնագրին համապատասխան՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ամրագրված ֆիքսված փոխարժեքով (2011թ.-ի համար՝ 1 ԱՄՆ դոլար = 357.9 ՀՀ դրամ): Նույն ֆիքսված փոխարժեքով է իրականացվել նաև Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի սպասարկումը, որը ՀՀ կառավարության արտաքին պետական պարտքի սպասարկման 42.1%-ն է:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվել է, որ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չէր կատարվում, և ՀՀ կառավարությունը 2010 թվականի մարտի 25-ին ընդունել է թիվ 324՝ «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառման կարգը հաստատելու մասին» որոշումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների շրջանառումը պետք է կատարվի գանձապետական միասնական հաշվով: 2010 թվականի ընթացքում գանձապետական միասնական հաշիվ է տեղափոխվել Համաշխարհային բանկի տասնմեկ ԾԻԳ-երի հաշիվները, իսկ 2011 թվականին ևս հինգ ԾԻԳ-երի հաշիվները, որոնց մնացորդը 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 6,324.8 մլն դրամ: Այսինքն՝ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի որոշման կատարման գործընթացը շարունակվում է և դեռ չի ավարտվել:

Մեր կարծիքով, ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով անհրաժեշտ է, որ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև ««Գերմանահայկական իինադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով:

2011 թվականի ՀՀ պետական պարտքը

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,128.7 մլն ԱՄՆ դոլար (1,592.7 մլրդ դրամ), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,568.2

մլն ԱՄՆ դոլար (1,376.5 մլրդ դրամ), իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 560.5 մլն ԱՄՆ դոլար (216.2 մլրդ դրամ): 2011 թվականին ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 86.4%, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 13.6%, այսինքն՝ 2010 թվականի համեմատ, 2011 թվականին ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ՀՀ արտաքին պետական պարտքը նվազել է 0.5 տոկոսային կետով:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) 60%-ը»: 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2010 թվականի ՀՆԱ-ի 45.5 %, մինչդեռ 2010 թվականին այդ ցուցանիշը կազմել է 43.9%: Երկու դեպքում էլ պահպանվել է օրենքի այդ կետի պահանջը:

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,568.2 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 2,950.9 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության պարտավորությունն է, իսկ 617.3 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) պարտավորությունը: 2011 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքը, 2010 թվականի համեմատ, աճել է 177.5 մլրդ դրամով (269.2 մլն ԱՄՆ դոլար): Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսման (նոր արտաքին վարկեր չներգրավելու դեպքում) ՀՀ արտաքին պետական պարտքը «պիկին» կհասնի 2012 թվականին՝ 3,875.44 մլն ԱՄՆ դոլար, որից հետո կնվազի:

2011 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 34.8% է, այսինքն՝ այս ցուցանիշով չի գերազանցել 50%-ի սահմանը, չորս ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր, մեկ ցուցանիշով միջին պարտքի բեռ ունեցող (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ	
		2010	2011
ԶՆԱ/ՀՆԱ	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 80% և ավելի		
	Սրբին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ միջև 48%	27.7%	29.5%
ԶՆԱ/ Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ 220% և ավելի		
	Սրբին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%- 220%	134.1%	

	Նվազ պարտքի թեռ ունեցող երկրներ մինչև 132%		125.7%
Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում	Առավել ծանր պարտքի թեռ ունեցող երկրներ 25.9%		
	Միջին պարտքի թեռ ունեցող երկրներ 23.45%		
	Նվազ պարտքի թեռ ունեցող երկրներ 7.8%	4.7%	4.2%
Տոկոսավճար /Արտահանում	Առավել ծանր պարտքի թեռ ունեցող երկրներ 11.65%		
	Միջին պարտքի թեռ ունեցող երկրներ 9.85%		
	Նվազ պարտքի թեռ ունեցող երկրներ 3.6%	2.3%	2.1%
Արտաքին պետական պարտք/Ար- տահանում	Առավել ծանր պարտքի թեռ ունեցող երկրներ 387.95%		
	Միջին պարտքի թեռ ունեցող երկրներ 209.00%	170.3%	148.4%
	Նվազ պարտքի թեռ ունեցող երկրներ 64.00%		
Արտաքին պարտք/ՀՆԱ	Սահման 50.00%	35.2%	34.8%
ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետքադրի եկամուտներ		4.4%	4.3%

Համաձայն 2010 թվականի նկատմամբ 2011 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի փոփոխության գործոնային վերլուծության արդյունքների հաշվետու տարում տրամադրված արտաքին վարկերի արտարժույթի և ԱՄՆ դոլարի փոփոխության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է 8.6 մլն ԱՄՆ դոլար կամ 3.2%, իսկ տրամադրված արտաքին վարկի ստացման և մարման գումարների տարբերության արդյունքում առաջացած արտաքին պետական պարտքի փոփոխությունը կազմել է 260.6 մլն ԱՄՆ դոլար կամ 96.8%:

2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները (մասհանումներ) կազմել է 320.508 մլն ԱՄՆ դոլար, որից՝ ՀՀ կառավարությունը ստացել է 238.484 մլն ԱՄՆ դոլար (88,201.056 մլն դրամ), իսկ ԿԲ-ն՝ 82.024 մլն ԱՄՆ դոլար: 2011 թվականին ստացված արտաքին վարկերի 63.3%-ը կամ 150.8 մլն ԱՄՆ դոլարը ոչ արտոնյալ վարկերն են:

ՀՀ կառավարության ստացած 238.484 մլն ԱՄՆ դոլար (88,201.056 մլն ՀՀ դրամ) արտաքին վարկերի՝

- 83.9 մլն ԱՄՆ դոլարը (31,082.5 մլն ՀՀ դրամ) կամ 35%-ը երեք միջազգային կազմակերպությունների (IMF, IBRD, IDA) կողմից դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող երեք ծրագրերի հանրագումարն է:
- 154.6 մլն ԱՄՆ դոլարը (57,118.6 մլն ՀՀ դրամ) կամ 65%-ը ստացվել է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպություններից ու օտարերկրյա պետություններից, տնտեսության առաջնային ոլորտների զարգացման ներդրումային ծրագրերի ֆինանսավորման նպատակով, ըստ ծրագրերի և վարկատունների:

2011 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի մարման և սպասարկման ծախսը կազմել է 101.613 մլն ԱՄՆ դոլար (50.384 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ և 51.229 մլն ԱՄՆ դոլար մարում), որից՝ ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի մարման և սպասարկման ծախսը կազմել է 69.346 մլն ԱՄՆ դոլար ((24,886.0 մլն ՀՀ դրամ) 41.248 մլն ԱՄՆ դոլարը (14,827.114 մլն ՀՀ դրամ) տոկոսավճարներ և 28.099 մլն ԱՄՆ դոլարը (10,058.91 մլն ՀՀ դրամ)` մարում), իսկ ԿԲ-ինը՝ 32.266 մլն ԱՄՆ դոլար (9.136 մլն ԱՄՆ դոլարը տոկոսավճարներ և 23.130 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում):

2011 թվականին վճարված 41.248 մլն ԱՄՆ դոլար (14,827.114 մլն ՀՀ դրամ) ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի տոկոսավճարներից 17.374 մլն ԱՄՆ դոլարը (6,219.6 մլն ՀՀ դրամ) կամ 42%-ը ՈՒ-ի կողմից տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլար (185,085.0 մլն ՀՀ դրամ) վարկի համար տրված տոկոսավճարներն են:

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: